

**ՓԱՐԻՋԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԿԵՆԴԱՆԻ ԼԵՋՈՒՆԵՐԻ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴՊՐՈՑԻ ՀԱՅՈՑ ԼԵՋՎԻ ԱՄԲԻՈՆԸ
(ճիմնադրման 200-ամյակի առթիվ)**

Ա. Կ. ԲԱՐԵՏԻՋՅԱՆ

Ֆրանսիական մեծ հեղափոխության տարիներին ժամանակի լավագույն արևելագետներից Ֆելե՝ Լանգլեսը, 1790 թ. Ազգային ժողովի հաստատմանը ներկայացրեց «առևտրի, քաղաքականության և գիտության դարգացման նրպատակով» արևելյան կենդանի լեզուների դասավանդման մի հատուկ գրպրոց հիմնելու մասին իր կազմած նախագիծը:

1795-ի մարտի 30-ին Ազգային կոնվենտի որոշմամբ նախագիծը կյանքի կոչվեց: Փարիզի Արևելյան կենդանի լեզուների դպրոցի հիմնադրման պահին ստեղծվեցին արաբերենի, պարսկերենի և թուրքերենի ամբիոնները: Երեք տարի անց հիշյալ ամբիոններին ավելացավ շորրորդը:

1798-ի աշնանը դպրոցի ազգագիրր տեղեկացնում էր, որ հայագրի ոմն Շահան Զրպետյան իր մայրենի լեզուն է ուսուցանելու: Սկզբնավորվեց հայոց լեզվի դասավանդումը արևելագիտական այս հաստատությունում: Ինչինչ պատճառներով 1801 թ. հոկտեմբերի 16-ին այն ընդհատվեց և վերականգնվեց 1810 թ. դեկտեմբերի 8-ին, քսան ունկնդիրներից բաղկացած խրմբի համար, որոնց մեջ էր ասլագա ճանաչված հայագետ Սեն-Մարտենը: 1812-ի փետրվարի 27-ին Շ. Զրպետյանը կայսերական հրամանագրով նշանակվեց ամբիոնի ղեկավար: Պաշտոնավարեց մինչև 1826 թ., որից հետո տեղափոսվեց Թիֆլիս, որտեղ և վախճանվեց 1837-ին:

Շ. Զրպետյանին փոխարինելու եկավ նրա աշակերտներից Լրվայյանը որ Ֆլորիվալը, որով սկիզբ դրվեց հայոց լեզվի դասավանդմանը հենց Ֆրանսիացիների կողմից: Նա այդ պաշտոնում մնաց բոլորից երկար՝ 36 տարի, մինչև վախճանվելը (1826—1862): 1834-ին մեկնեց Վենետիկ՝ դիտելիքները կատարելագործելու: 1836-ին և 1841-ին հրատարակեց Մ. Խորենացու «Հայոց պատմության» ֆրանսերեն թարգմանությունը, երկրորդը՝ գրաբար բնագրի հետ:

Լ. դը Ֆլորիվալին հաջորդեց էդուարդ Դյուլուրիեն (1862—1881): Հայերեն էր սովորել Վենետիկի Մխիթարյանների մոտ և 1853-ին ընտրվել Սուրբ Ղազարի Ակադեմիայի անդամ: 1850-ին ֆրանսերեն թարգմանեց խաչակրաց առաջին արշավանքի մասին Մատթեոս Ուռհայեցու տեղեկությունները՝ ըստ Մխիթարյան միաբանության մատենադարանում և Փարիզի Ազգային գրադարանում պահվող ձեռագրերի: Հրատարակության առաջարկում էր. Դյուլուրիեն գրում է. «Արևելքում քրիստոնեության աղղեցությունը ձևավորված գրականությունների մեջ հայկականն անառարկելիորեն ամենաակնառուն է իր հարուստությամբ և ինքնատիպությամբ»¹: Շուտով ամենահեղինակավոր պարբերականներն ու գիտական ժողովածուները սկսեցին տպագրել նրա մի շարք ու-

¹ Ed. Dulaurier, Recit de la premiere croisade, extrait de la Chronique de Mathieu i'Edesse, Paris, 1850, Preface, p. V—VI.

սումնասիրությունները՝ նվիրված մասնավորապես հայ պատմագիրների աշխատություններին, ֆրանսերեն թարգմանությամբ ու ծանոթագրություններով²:

Էգ. Դյուլորիեից հետո հայոց լեզվի ամբիոնի ղեկավար դարձավ Օգյուստ Կալիեյր (1881—1902), որի խորհմտ կարողությունները բարձր գնահատվեցին ժամանակի դիտական հասարակայնության կողմից: 1871-ից նա վարում էր Արևելյան կենդանի լեզուների դպրոցի գրադարանապետի և քարտուղարի պաշտոնները: Խորացավ մասնավորապես հայոց պատմության մեջ, ուսումնասիրեց Մովսես Խորենացուն: Ֆրանսերենի փոխադրեց գերմանացի հայագետ Մ. Լաուերի՝ դրաբարի քերականությունը (1883)՝ հայերենի ուսուցումը դյուրացնելու նպատակով:

Ո. Կարիերից հետո ամբիոնի ղեկավարությունն ստանձնեց մեծահամբավ հայագետ Անտուան Մելեյ (1902—1906): Ժամանակակից հայերեն սովորեց Ո. Կարիերից, իսկ դրաբար՝ Հ. Տաշյանից, Վիեննայի Մխիթարյան միաբանությունում: Հայոց լեզվի աբուբենին, ուղղագրությանը, տառադարձությանը, բառագիտությանը, ստուգաբանությանը, համեմատական շարահյուսությանը և այլ հարցերի նվիրված նրա աշխատություններից կարևորագույնները հայերեն թարգմանությամբ ամփոփված են «Հայագիտական ուսումնասիրություններ» մեծածավալ զրբում³: Ա. Մելեյի կողմից հայոց լեզվի դասավանդումը նըշանավորվեց գրաբարին զուգահեռ նաև աշխարհաբարի ուսուցմամբ:

Ա. Մելեյին հաջորդեց Ֆրեդերիկ Մակլեյը (1906—1937), որը նույնպես աշակերտել էր Օ. Կարիերին, նրանից սովորել հայերեն: Հայագիտությանը նըվիրված նրա բազմաթիվ գործերից առավել ճանաչված են «Արևելյան խճանկար», «Ֆրանսիան և Հայաստանը արվեստի և պատմության տեսանկյունով», «Հայաստանի շուրջը» ուսումնասիրություններ⁴, որոնցում նա անդրադարձել է հայոց պատմությանը, միջնադարյան կապերին, երաժշտությանը, ճարտարապետությանը, մանրանկարչությանը և այլ հարցերի:

Ֆ. Մակլեյից հետո, 1937-ից մինչև 1949 թ. ամբիոնը ղեկավարեց Ժորժ Դյումեզիլը, որի կյանքի ու գործունեության մասին մեզ ծանոթ գրականության մեջ տեղեկություններ չկան:

Հաջորդը՝ Ֆրեդերիկ Ֆեյդիեն, պաշտոնավարեց 28 տարի (1949—1977): Աշակերտել էր Ֆ. Մակլեյին և Ա. Մելեյին: Նրա հայագիտական մի շարք աշխատությունները նվիրված են հայոց լեզվին, մասնավորապես գրական արևմտահայերենին, դասական հայերենի բայական և հոլովական համակարգերին, հայերենի բարբառներին, հայ գրականությանը և պատմությանը⁵:

² S^L Ed. Dulaurier, Etude sur l'organisation politique, administrative et religieuse du royaume de la Petite Arménie à l'époque des Croisades. Journal Asiatique, V-e série, t. XVII, XVIII, Paris, 1861. Recueil des Historiens des Croisades. Documents arméniens. Documents français et latins relatifs à l'Arménie. Imprimerie impériale, t. 1, Paris, 1869, t. 2, Paris, 1906.

³ Ա. Մելեյ, Հայագիտական ուսումնասիրություններ, Ե., 1978:

⁴ F. MacIer, Mosaïque orientale, Paris, 1907; Եույնի՝ La France et l'Arménie à travers l'art et l'histoire, Paris, 1917; Եույնի՝ Autour de l'Arménie, Paris, 1917.

⁵ S^L Frédéric Feydit, Manuel de langue arménienne (Arménien occidental moderne), 2e éd., revue et augmentée, Paris, 1969; Եույնի՝ Considérations sur l'alphabet de Saint Mesrop et recherches sur la phonétique de l'arménien, 2e éd., Wient Mechitharisten-Buch., 1982; Եույնի՝ Amulettes de l'Arménie chrétienne, Venise, Ct. Lazare, 1986.

Ֆ. Ֆեյդիին հաջորդեց նրա աշակերտը, ներկայիս անվանի հայագետ Ժան-Պիեռ Մահեն: Գրաբարին և աբղամա հայերենին քաջածանոթ լինելուց բացի, 1975—1977 թթ. Երևանի համալսարանում դասախոսելու տարիներին կատարելապես տիրապետեց նաև արևելահայերենին, որն ավելի ընդարձակեց նրա բանասիրական հետազոտությունների ոլորտը: Ֆրանսերեն թարգմանեց Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի առաջաբանն ու որոշ հատվածներ, նաև՝ նարեկացի, Մեծարենց, Զարենց, Պ. Սևակ, թարգմանեց ու մեկնաբանեց «Հերմայն Եռամեծի առ Ասկղեպիոս սահմանք» ճառը, հրատարակեց հայագիտական բազմաթիվ ու բազմաբնույթ աշխատություններ՝ նվիրված միջնադարյան Հայաստանի պատմությանը, հայ գրականությանն ու հայերենի քերականությանը: Բաղմաբեղուն գործունեության համար ընտրվել է Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ:

Վերջին տարիներին (1992-ից) ամբիոնի ղեկավարությունն ստանձնել է երիտասարդ, բայց գիտակ ու եռանդուն հայագետ Անահիտ Տոնապետյանը, որը լի է ամբիոնի լավագույն ավանդույթները պահպանելու և զարգացնելու ցանկությամբ ու վճռականությամբ:

Վերադառնալով ամբիոնի հիմնադրմանն ու նրա ունեցած պատմական առաքելությանը՝ կցանկանալինք շեշտել հետևյալը.

1. Մինչև հայոց լեզվի ամբիոնի ստեղծումը հայագիտությունը Եվրոպայում և մասնավորապես Ֆրանսիայում արգեն ձևավորված էր և որոշակի արդյունքներ էր արձանագրել: Հիշատակենք Ֆրանսիացի ճանաչված հայագետներից մի քանիսին՝ Ժակ Վիյոտ, Մաթյուրեն Լա Կրոզ, Գ. Վիլֆրուա, Պիեռ Դյու Ֆուր, Սիմոն-Պիեռ Լուրդե և ուրիշներ:

2. Փարիզի Արևելյան կենդանի լեզուների բարձրագույն դպրոցում հայոց լեզվի ամբիոնի հիմնադրումով հայագիտությունը սլաշտոնական կարգավիճակ ձեռք բերեց Ֆրանսիայում: Եթե եվրոպական մյուս երկրներում հայագիտությունն առավելապես զարգանում էր անհատ գիտնականների անձնական եռանդի շնորհիվ, ապա Ֆրանսիայում առկա էր պաշտոնական նախաձեռնություն:

3. 200-ամյա գոյության ընթացքում հայոց լեզվի ավանդումը բնականոն ձևով վերաճեց հայագիտական լուրջ ուսումնասիրությունների, և ամբիոնի գործունեությունը լայն ընդգրկում ու գիտահետազոտական ուղղվածություն ստացավ: Հայոց լեզվի ամբիոնը վերածվեց հայագիտության ճանաչված կենտրոնի:

4. Ամբիոնի ստեղծումը մեծ արձագանք գտավ ամբողջ Եվրոպայում և Արևելքում: Ֆրանսիայում հայագիտությունը հասավ մի նոր աստիճանի: Ֆրանսիացի հայագետները լուրջ ներդրում ունեցան հայոց լեզվի, հնագիտության, պատմության, աշխարհագրության, ժամանակագրության և բազմաթիվ այլ խնդիրների լուսաբանմանը նվիրված հրատարակումներով և մանավանդ հայ գասական մատենագիրների՝ Ղազար Փարպեցու, Մովսես Խորենացու, Եղիշեի, Թովմա Արծրունու, Մխիթար Այրիվանեցու, Առաքել Դավրիժեցու, Զաքարիա Սարկավազի, Աբրահամ Կրետացու, Փավստոս Բուղանգի, Կորյունի և այլոց

⁶ *St'.* Jean-Pierre Mahé, *Hermès en Haute-Egypte*, t. 1, Québec, 1978, t. 2, *Le fragment du discours parfait et les définitions hermétiques arméniennes*, Québec, 1982; *Մովսէս Խորենի և ինսկրիպցիոնային լեզուները*, France, 1994.

Լրկերի ֆրանսերեն թարգմանություններով, որոնք գիտական պրպտումների ույի էին հարթում ֆրանսիացի և ալլազգի գիտնականների համար: Ուստի յուկտր է անուեսել այն փաստը, որ ֆրանսիական հալագիտությունը ամբիոնի դասախոսների մենաշնորհը չի եգել: Գիտական մնայուն արժեքներ են թողել ժ. Սեն-Մարտենը, Մ. Բրոսսեն, Վ. Լանգլուան, է. Բորեն, է. Պոյուդոմը, Վ. Լրնորմանը և ուրիշներ: Պատմաբանասիրական հետաքրքրություն ներկայացնող հալերեն բնագրերը ֆրանսերեն թարգմանելը ավանդական է դարձել և շարունակվում է մինչև մեր օրերը (Ժան-Պիեռ Մահե):

5. Ֆրանսիայում և ողջ Եվրոպայում հալագիտական հետադոտություններին անդնահատելի նսլաստ են բերում Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան միաբանությունները, ուր մշտապես իրենց գիտելիքներն են կատարելագործում և արժեքավեր իտրհորդներ ու օգնություն են ստանում ալլազգի հալագետները:

Փարիզի Արևելյան կենդանի լեզուների բարձրագույն դպրոցի հայադիտության ամբիոնն այսօր 200 տարեկան է: Անցել է դասավանդման ու դիտական որոնումների փառավոր ուղի, դարձել մշակութային համընդհանուր արժեք ունեցող հալագիտական հետադոտությունների՝ հիանալի ավանդույթներով օժտված և միշազգային համբավ վայելող եվրոպական ուրույն մի կենտրոն:

КАФЕДРА АРМЯНСКОГО ЯЗЫКА ПАРИЖСКОЙ
ВЫСШЕЙ ШКОЛЫ ЖИВЫХ ВОСТОЧНЫХ ЯЗЫКОВ
(К 200-летию со дня основания)

А. К. БАРЛЕЗИЗЯН

Резюме

По предложению видного французского востоковеда Ланглеса, Национальный Конвент Франции в 1795 г. принял решение об открытии высшей Школы восточных языков в Париже. В 1798 г. в Школе была создана кафедра армянского языка. Тем самым во Франции арменистика приобрела официальный статус. XIX век ознаменовался появлением целой плеяды французских арменоведов, чьи исследования внесли ценный вклад в изучение армянского языка, армянской литературы, истории, археологии, географии и т. д. Первым руководителем кафедры был Шаан Джерпетян (1798—1826 гг.). Впоследствии кафедрой заведовали Л. де Флориваль (1826—1862 гг.), Эд. Дюлорие (1862—1881 гг.), О. Карьер (1881—1902 гг.), А. Мейе (1902—1906 гг.), Ф. Маклер (1906—1937 гг.), Ж. Дюмезиль (1937—1949 гг.), Ф. Фейди (1949—1977 гг.), Ж.-П. Маэ (1977—1992 гг.), А. Тонапетян (с 1992 г. по сей день). Кафедра прошла длинный и славный путь и приобрела международную известность.